Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Համաձայնագիր	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԱԳՆՊՏ 2015.12.30/4(34)	*Ընդունման վայրը*	Պեկին
Ընդունող մարմինը	Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը*	25.03.2015
Ստորագրող մարմինը		*Ստորագրման ամսաթիվը*	25.03.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	12.12.2015	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

ցանկանալով հաստատել ավելի սերտ համագործակցություն զբոսաշրջության բնագավառում և

կարևորելով զբոսաշրջությունը՝ որպես երկու երկրների պատմությունը, մշակութային ժառանգությունը, ժողովուրդների կենցաղն ու ապրելակերպը ճանաչելու գործուն միջոց, ինչպես նաև որպես ժողովուրդների միջև բարի կամքի դրսևորման ձև,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը համաձայնում են համագործակցել զբոսաշրջության բնագավառում՝ ըստ սույն Համաձայնագրի, իրենց երկրների օրենսդրության և միջազգային համաձայնագրերի, որոնք պարտադիր են երկու Կողմերի համար:

Կողմերը կհամագործակցեն երկու երկրների միջև զբոսաշրջության (այդ թվում՝ կազմակերպված զբոսաշրջության) զարգացման և այդ նպատակով երկու երկրների համապատասխան պետական և մասնավոր հատվածների շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ապահովման ու տարբեր զբոսաշրջային ծրագրերի շրջանակներում համատեղ զբոսաշրջային արտադրանքի ձևավորման և տարբեր զբոսաշրջային նախագծերի շրջանակներում երրորդ երկրներում դրանց խթանման ուղղությամբ:

Հոդված 2

Կողմերը փոխադարձաբար կնպաստեն երկու երկրների զբոսաշրջության բնագավառի վիճակագրության և այլ տեղեկատվության, ներառյալ զբոսաշրջային ռեսուրսների մասին տեղեկատվության փոխանակմանը:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն փոխադարձ մասնակցությունը երկու երկրներում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին, տոնավաճառներին, համաժողովներին, սեմինարներին և այլ միջազգային զբոսաշրջային միջոցառումներին:

Հոդված 4

Կողմերը կաջակցեն իրենց պետություններում զբոսաշրջության բնագավառում գործող զբոսաշրջային ներկայացուցչությունների, զբոսաշրջային օպերատորների, այլ կազմակերպությունների համագործակցությանը՝ երկու երկրների միջև զբոսաշրջային հոսքերի ավելացման նպատակով:

Հոդված 5

Կողմերը, իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան, կձգտեն դյուրացնել երկու երկրների միջև զբոսաշրջության նպատակով ժամանումների ընթացակարգերը:

Հոդված 6

Կողմերը պարտավորվում են զարգացնել փոխադարձ համագործակցությունը հետևյալ բնագավառներում՝ կադրերի մասնագիտական դասընթացներ և վերապատրաստում, զբոսաշրջության բնագավառի մասնագետների, փորձագետների և լրագրողների փոխանակում:

Հոդված 7

Կողմերը զբոսաշրջության ոլորտը կարգավորող իրենց պետական իրավասու մարմինների միջոցով կաջակցեն զբոսաշրջության ոլորտում ներդրողների, տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև զբոսաշրջության բնագավառի հասարակական և ոչ առևտրային այլ կազմակերպությունների միջև համագործակցության հաստատմանը և զարգացմանը:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի իրականացման համար հայկական կողմից պատասխանատու է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, իսկ չինական կողմից՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության զբոսաշրջության պետական վարչությունը:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի իրականացմանն առնչվող հարցերը կարգավորելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում Կողմերը յուրաքանչյուր երկրի հավասար թվով լիազոր ներկայացուցիչներից կստեղծեն համատեղ հանձնաժողով: Հանձնաժողովի հանդիպումները, ըստ անհրաժեշտության, տեղի կունենան տարեկան մեկ անգամ՝ Երևանում կամ Պեկինում:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում Կողմերը դրանք կլուծեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 11

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և նրանց փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով նախատեսված կարգով և կհանդիսանան Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:
Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է անորոշ ժամկետով և կարող է դադարել Կողմերից որևէ մեկի՝ այդպիսի մտադրության մասին դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Կատարված է Պեկին քաղաքում 2015 թվականի մարտի 25-ին, երկու հավասարազոր բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, չինարեն և անգլերեն: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2015թ. դեկտեմբերի 12-ին